

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Ստորագրողացիք գիտե՛մ են ուղղակի
Тифлисс. Редакция „Ммаск“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց աշխատանքի խնդիրը — Ներքին տե-
սուծիւն: Կանակ խմբագրիւն: Կանակ խմբա-
գրիւն: Ներքին լուրեր: Արտաքին տեղեկա-
թիւն: Հայ կաթոլիկների խնդիրը: Արդիւն:
— Վրացի հեռագիրներ: Յայտարարութիւններ:
— Բանասիրական: Թիւրքաց հայերի տըն-
տեական գրութիւնը:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐԸ

Նորերում տպւեցաւ «Մշակի»
մէջ մեր Մօսկվայի աշխատակից,
պ. Լեւեւանցի յօդուածը կանանց
աշխատանքի խնդրի վրա: Հեղե-
նակը առաջարկում էր հիմնել
Թիֆլիսում մի ընկերութիւն, որ
նպատակ ունենար հոգալ հայ
կանանց սեռի մտաւոր զարգաց-
ման վրա և աշխատէր միջոց տալ
հայ աղջիկներին հասնել ուսման
և աշխատանքի միջոցով անկախ
նիւթական գործեանը:

Դեռ 1867 և 1868 թւերին,
երբ «Մշակը» չէր կար, մենք նոյն
մտքերը յայտնում էինք մեր յօ-

դուածներում կանանց մասին
«Հայկական Աշխարհ» ամսագրի
մէջ:

Ի՞նչ տղամարդը, հարուստ լի-
նի նա, թէ աղքատ, իրաւունք
ունի տարրական և միջնակարգ
ուսում ստանալու, դրանից յետոյ
բարձրագոյն ուսում ստանալու,
կամ մի արհեստ, արուեստ, շքե-
ղարուեստ, մասնագիտութիւն սո-
վորելու, որպէս զի անկախ լինի,
ինքն իրանից կախած չլինի, ինքն
իր սեփական ունեւորի վրա կան-
գնած լինի, իր դրութեամբ ինքն
իր անձին պարտական լինի, — իսկ
կինը այդ չէ կարող անել:

Ուսում չը տալով, որ և է մաս-
նագիտութիւն չը սովորեցնելով
կանանց, մեր նպատակն է նրանց
մշտական ստրկութեան մէջ պա-
հել, երբեք միջոց չը տալ նրանց
անկախ լինել իրանց սեփական
ունեւորի վրա կանգնել, իրանց դը-
րութեամբ միմիայն իրանց անձին
պարտական լինել:

Մինչև որ նա աղջիկ է, կինը

կախած է իր ընտանիքի կամքից,
նա իր սեփական կամք չունի և
չէ էլ կարող ունենալ, որպէս մը-
տաւորապէս կիսով չափ զարգա-
ցած էակ: Կտոյ անհաւատաւ են
համարում որ և է հասարակական
իրաւունքներ վայելելու, բայց ան-
հաւատաւ են համարում մի տաւան
և եօթ տարեկան աղջկան պսակ-
վելու, ուրեմն այնպիսի մի ընկե-
րակցութեան մէջ մտնելու, որին
առաջ տանելու համար բարոյա-
կան և մտաւոր մեծ պատրաս-
տութիւն է հարկաւոր, որի վրա
դրած է ահագին բարոյական պա-
տասխանատուութիւն, թէ այդ ըն-
կերակցութեան կապերը կապող
երկու անհատների վերաբերու-
թեամբ, թէ հասարակութեան և
թէ վերջապէս լինելու երեսանների
դատաւարակութեան վերաբերու-
թեամբ:

Կինը մտնում է այդ ընկերակ-
ցութեան մէջ ոչ թէ որպէս գի-
տակցական կերպով զարգացած
անհատ, ինքնաճանաչութեամբ չէ

ընդունում այդ ընկերակցութեան,
ամուսնութեան, անդամակցութիւ-
նը, — այլ դառնում է այդ ընկե-
րակցութեան անդամ, որպէս ան-
հաւատաւ էակ, անհատական զար-
գացում, անկախ գործիւն, ինք-
նաճանաչութիւն չունեցող անձ-
նաւորութիւն: Դա մի և նոյն կը
լինէր որ մի անհաւատաւ անձն
մի որ և է պայմանագիր, կոնտ-
րակտ կապեր, և այնպիսի մի
պայմանագիր, որին ստորագրելով
մարդը յանձն առնէր մի որ և է
ահագին պատասխանատուութիւն,
առանց այդ պատասխանատու-
թեան նշանակութիւնը ընդունել
կարողանալու:

Յանկալի է որ աղջիկը կապեր
այդ տեսակ նշանաւոր ընկերակ-
ցութեան պայմանագիրը, մտնէր
ամուսնական ընկերակցութեան
մէջ, ոչ թէ որպէս անհաւատաւ
էակ մտաւոր, բարոյական և նիւ-
թական կողմից, բայց որպէս
զարգացած, բարոյապէս և մտա-
ւորապէս չափահաս անձնաւո-

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Հրապարակման դատաստութիւն, որ տեղի ու-
նեցաւ Թիֆլիսի Արհեստագործների ընկերութեան
մէջ մարտի 11-ին, և Թիֆլիսի Սորանայի դահլի-
ճում մարտի 25-ին, 1879 թւին:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ ՎԵՐՋԸ

Հոգերը Թիֆլիսյան լինում են միւլք (սեփա-
կանութիւն), թափու (կապալով վերցած, վարձ-
ված), մակի (մզկիթների և եկեղեցիների սեփա-
կանութիւն) և մահլու (անտէր, անժառանգ
մնացած հողեր): Հայ գիւղացին Թիֆլիսյան,
թէ և ունի սեփական հողեր, բայց այդ նրա իրա-
ւունքի գէտ, ինչպէս իսկոյն կը տեսնենք, գեղծում
ենք են դրոշմում: Այն հողերը, որոնք մահլու
են մնացել (անտէր, անժառանգ, անժառանգ), տէրու-
թիւնը սեփականացնում է և գիւղացիներին,
կամ կարուածատներին ծախում է, թափու է
տալիս, յանձնելով մի և նոյն ժամանակ առնողին
մի կարուածագիր, բայց առնողը սեփականատէր
չէ դառնում, այլ վայելում է միայն հողի գործա-
դրութիւնը, իսկ թափու տուած հողը ահլը դար-
ձեալ տէրութիւն է մնում: Վակի համարվում է
մզկիթների և առհասարակ եկեղեցիների սեփակա-
նութիւն, բայց երևում է, որ քրիստոնէական եկե-
ղեցիները և վանքերը իրաւաբանական անձնաւորու-
թիւններ չեն համարվում, որովհետեւ, ինչպէս տես-
նում ենք Վ. Պոլսի հայոց պատրիարքարանի պա-
տմական տեղեկագիրներից, հայերը անդադար
զանգատւում են, որ վանքերի և եկեղեցիների կա-
լուածները մահլու են յայտնվում և տէրութիւնը
առանց պայտելութեան նրանց ծախում է և թա-
փու է տալիս, մասնաւոր անձանց: Արտաւերը,
առհասարակ տէրութեան սեփականութիւն են հա-
մարվում, որոնք ապառքի թող լինի այն ծանր
հարկը, որ վերցնում է տէրութիւնը իւրաքանչիւր

ոչխարից, իբր իր արօնների վրա արածացնելու
իրաւունք ունենալու համար: Իւրաքանչիւր ոչխարից
տէրութիւնը տարեկան 3 դրուշ (20 կոպէկ) հարկ
է վերցնում: Հայ գիւղացին վճարում է տէրու-
թեանը դիտարկ, վճարում է իր բերքից տասա-
նորդը, վճարում է դիտարկահարկ (որովհետեւ
դիտարկ չէ տալիս և այդ հարկը պահանջելու ժա-
մանակ նախկէս անթիւ գեղծումներ են կատար-
վում), վճարում է ոչխարի հարկ, վերջապէս կա-
լուածական հարկ: Այս ինչ է երևում մահլու տա-
նոր դիտարկի մասին պատրիարքարանի դանդա-
ներից, երբ որ բերքը ծախվում է, լաւ ունի,
տասանորդի հաւաքող կապալաւուն տասանորդը
առնում է առաւելութեամբ, իսկ երբ որ նա գին
չունի, կապալաւուն թանգ գնահատելով բերքը,
փողն է պահանջում: Կալուածական հարկի
հաւաքման մէջ հետեւեալն է պատահում: Մի վի-
ճակից, կամ մի գիւղից, որտեղ հայերը խառն են
ընտրվում մահլուականների հետ, մի որոշված
չափով կարուածական հարկ է պահանջվում, որ
բաժանվում է կարուածատէր հայերի և թիւրքերի
միջա (բաժանողական հարկ, repartitions Steuer):
Բայց հայի կարուածները միշտ թանգ են գնահա-
տում, քան թէ մուսուլմանների կարուածները և
հայը միշտ ստիպված է աւելի վճարելով լրացնել
պահանջվող հարկի ընդհանուր դուռների մէջ այն,
ինչ որ կողմնապահութեամբ հարկահան պաշտո-
նեան պատան է պահանջել մահլուականից:

Հայ գիւղացին ընտրվում է կամ իր սեփական
հողի վրա, կամ թափու առած պետական հողի
վրա: Բայց պատրիարքարանի պաշտոնական տե-
ղեկագիրների մէջ անթիւ գնահատման ենք, որ
հայի հողը շատ անգամ անկարգութեամբ անցնում
է թիւրք կամ քրիւր բեղերի ձեռքը և նրանց սե-
փականութիւն է դառնում: Այդպիսով հայը, որ
իր պատմութեան մէջ երբեք ձուլութիւն չէ ու-
նեցել, դառնում է գերեզմանի ձորում: Եւ
հայը ընդի հողի վրա ապրելով, բայց բոլոր վեր-
ջիված հարկերից, ծախված է և իր բեղերի վճա-
րել կարուածական հարկը և իր բերքերից տասա-
նորդը: Գնահատմանը կրեւոր է, որ հայերի մա-
նաւոր հողերը ապահոված չեն կրուածականութեան

դէմ: Հայը վճարում է տէրութեանը պահանջվող
հարկերը, օրէնքով սահմանված չափից աւելի,
սովորված լինելով վախին, կայսեկամիւն, միւղի-
րին և վերջին դառնութիւն կաշառքներ տալ, նա
վճարում է հարկ բեղին, կերակրում է նրան, իսկ
բեղը ձեռնարկ ծախած անգործ նստած է: Բայց
սորանից նա պէտք է զօրք պահի, որ իր գիւղով
է անցնում, բայց այդ զօրքը, որին նա պահում է,
չէ սղաշտպնում նրան քրիւրի առաքակութեան
դէմ: Քրիւրը առաքակը խլում է նրա ունեցածը,
անարգում է նրա ընտանիքը... Իսկ վերջին ժա-
մանակները հարկերը դարձեալ դառնում դժուա-
րացան, որ տէրութիւնը էլ չէ ընդունում թղթա-
գրամ հարկատուներից...

Հայը իրաւունք չունի շահել ոչ մի գործի մէջ,
առանց իր շահերի մի մասը տէրութեան պաշտո-
նեաներին տուել: Հակառակ դէպքում նրան սպա-
տում է քանադ, կամ արտոնաբեր: Կամ եթէ հայը
իր խելքով, իր ճարտիկութեամբ, իր եռանդով
մրցում է մի նշանաւոր թիւրք անձնաւորութեան
հետ, նրան լոյս ցերեկով ապանել կը տան, ինչպէս,
օրինակ, սպանել տուեցին քանի մի տարի սրանից
առաջ, փաշայի ներկայութեամբ էրզրումի խա-
չատուր էֆէնդի Բասուրմաշեանին, երկրի
մէջ ամենահարուստ, ամենանշանաւոր, ամենամեծ
հեղինակութիւն ունեցող մարդուն...

Այդ տեսակ հանդամանքներում ինչ հնար կայ
առաջադիմութեան ապաստելու, ինչ հնար կայ պը-
ղիւնագործական ընկերութիւններ, շահաւէտ ձեռ-
նարկութիւններ, բաժանորդական, կամ այլ ըն-
կերակցութիւններ իրագործելու...

Ասում են որ Թիֆլիսյան գրված օրէնքներ
կան: Բայց այդ օրէնքները մնում են մեռած տա-
ւեր: Հայը որպէս քրիստոնէացի, իրաւունք չունի
Թիֆլիսյան գէշքը կրելու, իրաւունք չունի, որ-
պէս քրիստոնէացի, դատարաններում վկայութիւն
տալու:

Այստեղ եւ պարտաւորութիւն եմ համարում
յիշել, որ Թիֆլիսյան մէջ հողային յարաբերութիւն-
ների մասին տեղեկութիւններ են գլխաւորապէս
քաղուել Վ. Պոլսի հայոց պատրիարքարանի տեղե-
կագիրներից և Վրացի մէջ անցեալներում տպւած

պ. Մէլիքզադէի յօդուածներից: Իսկ թէ հո-
ղային յարաբերութիւնների և թէ հարկատուութեան
մասին տեղեկութիւնների հաղորդելը ինձ օգնեց
վերատուգելու Թիւրքաց հայերի մէջ յայտնի մի
գրող, պ. Մերեյ:

Ուրեմն հայի մի կողմը կանգնած է նենգաւոր,
բարբառոս, առաքակ քրիւրը, միւս կողմը ճիւղակեւ,
ծոյլ, կաշառակեր թիւրքը, իսկ նրա վրա, իշխում
է մի տէրութիւն, որ նայում է հայի վրա ինչպէս
մի կաթնատու կովի վրա, մինչև անգամ առանց
հոգալու, լաւ ստնեսի պէս, օրինաւոր կերակրելու
և խմացնելու այն կովը, որից նա աւելի կաթ է
պահանջում, քան թէ նա կարող է տալ:

Թիւրքերը շատ լաւ են հասկանում հայի արժա-
նաւորութիւնները, բայց այնու ամենայնիւ աշխա-
տում են նեղել հայերին, եթէ կարելի է, ջնջել նը-
րանց երկրիս երեսից: Բարեկամներիցս մինը պատ-
մում էր ինձ հետեւեալը: Երբ որ ուռնաց զօրքերը
պէտք է դուրս գալին էրզրումից և լուր տարած-
վեցաւ որ էրզրումի հայերը զաղթելու են մեր զօր-
քերի ետեւից դէպի Ռուսաստանի սահմանները,
Թիւրքաց տէրութեան ներկայացուցիչ էրզրումի
մէջ Ալի-էֆէնդի Արաբզադէ բացականչեց մի
մասնաւոր խօսակցութեան ժամանակ. «Թող կը-
շեն այդ հայերը, իսկ նրանց տեղ թող զան այս-
տեղ ուռնահայտակ մահլուականները, մենք գո-
նէ խիտ մահլուական ազգաբնակչութիւն կունե-
նանք, ազատ քրիստոնէական տարրից»: Այդ խօ-
սակցութեանը ներկայ է գտնվում էրզրումի պար-
սից հիւպատոս, Միլլա Ալապկեր-խանը: «Շատ
բարի, ասում է պարսից կոմսուրը, ասե՛ք թէ հա-
յերը բոլորն էլ գնացին Հայաստանից և նրանց
տեղը եկան մահլուականները. բայց հարցնում եմ
ձեզ, այն ժամանակ ո՞վ կաշխատի, ո՞վ արհեստնե-
րով կը պարապի այս երկրում, ո՞վ կը մշակի երկիրը,
ո՞վ կը տայ տէրութեանը հարկի մեծ մասը... Հա-
յերից, այդ աշխատող տարրից զրկելով, կը գրկվէք
ձեզ կերակրողներից, ձեզ կարող է սով սպառնալ:
Ալի-էֆէնդին փոքր ինչ մտածելուց յետոյ, պա-
տասխանեց. «Այլ էլ ճշմարիտ է»:

Եւ այդպէս նայում են հայերի վրա Թիւրքայի
պետական ամենաբարձր շրջաններում անգամ:

յարուցելով յանցեալս 1875 ամի յազգային թիւ-
թիւն Կ. Պոլսոյ ի մասին Մուրադեան վարժարա-
նի՝ առաջնայն է ի մայրաքաղաքս (Փարիզ) յատկա-
պէս հաստատարեալ վարժարանս մի իւրաքանչիւր
ամի առ ի հանելով փութեամբս ի վաճառ. գտնեն
և զամենայն կահս և կարասիս նորին։ Ի նկատի
առնելով զվեցանակարս վասն Ազգի հետեանս սոյն-
պիսի ձեռնարկութեան՝ պարտ անձինս վարկայ
ընդ փոյթ ծանուցանել զպայմանն Արքայական
կաթիլիկոսին, ի հետեւանս որոյ ո. Վահրամ և
պիսկոպոսն Մանուկի հաղորդեաց ինձ թէ՛ Նո-
րին Օծովիւնս առեալ ի յարգանս զբացարձա-
թիւնս իմ՝ բարեհաճեալ է յանձնել զդրոճն ի տը-
նօրէնութիւն Քերթլիս Բարձր Արքայութեանս, ու-
նելով զիս ևս գործակից։ Վասն որոյ փութեամբ
մատուցանել զհասցէն իմ, յարակցելով զի պարտ է
կանխապէս զգուշանալ զանոյ յիշեալ հաստա-
մատարն ջանաց յոյժ կարի փութեամբս յաւարտ
ածել զվաճառումն տան, որում՝ որպէս կարծես
օգնական լինին նաև բարձրաստիճան եկեղեցա-
կանք տեղւոյս... Բայց վարձեալ ոչինչ լուր չը
ստացայ պատրիարքից։

Հազիւ մի ամիս անցուցած լինելով Գերմանիայի
մէջ՝ ես հեռագրով հրաւիրուցայ վերադառնալ
Սարգիս վարդապետին թաղելու համար։ Այդ տեղ
ևս տեղեկացայ որ նախ իմ այդ նամակը տպած է
եղել Կ. Պոլսոյ 21 ոչնչ հայտնի մէջ ապա արտա-
տրուած «Փոփոխ» մէջ (ես չը տեսայ և ոչ մէկը)
մինչդեռ աւելի հարկաւոր էր առ ժամանակ զաղ-
տելք պահել այն երկրորդ՝ Միսիթարեանը զգա-
տանալով այդ նամակից և առհասարակ խնամալով
որ ես չարժեքեմ հոգի տան վաճառումն խափա-
նելու համար սկսել են աւելի ես աշխատել շու-
տով ծանկն աչ խորհրդակցելով այս բանի մասին
փարիզացեալս Կ. թոթովանեանցի և Կ. Բէյ-
բեանցի հետ (սա այն հայ ուսանողն է, որ ընտել-
ւում էր «Մուրադեան վարժարան» մէջ), ևս լինելով
վերջինից մի յօդուած ուղարկել Կ. Պոլսոյ թիւ-
թիւնին, իսկ ինքս վերադարձայ Գերմանիա։ Այնու-
հետեւ Միսիթարեանը աւելի ևս շտապեցրել էին
տունը ծանկն աչ գործը, բայց բարեբաղդաբար
նոյն միջոցներին փարիզում պատահած լինելով մի
տաճկաստանցի վարդապետ, կարծեմ հ. Մանուկ
անուն, թոթովանեանը և Բէյբեան հաղորդել էին
նրան բոլոր հանգամանքները և մի հեռագրով դի-
մել էին Պատրիարքին որ անպատճառ մի բան
տնօրինէ շուտով, ապա թէ ոչ տունը կը ծախվի
Գրա հետեանցն եղել է այն որ քստ միջոցառու-
թեան Պատրիարքի Օսմանեան տէրութիւնը պա-
տուիրէլ էր իր փարիզի դեսպանին խափանել տալ
տան վաճառումն ճշմարտեմ տէրութեան ձեռքով,
որ և պաշտօնաւորս յայտնել էր ինչեւէ Արքայում
վարդապետին առ ժամանակ չը ծանկն տունը
Այս տեղեկութիւնները հաղորդեցին ինձ վերադի-
շալով թոթովանեանը և Բէյբեանը, երբ ես նոյն
1877 թ. վերջերս երրորդ անգամ վերադարձայ
Փարիզ, թէպէս ես չը կարողացայ ուրիշ աղբիւր-
ներով տուեղի գրա ճշտութիւնը, բայց այդքանը
պտուղապէս խնայցայ որ տան վաճառումն յիշա-
խափանեալ էր։

Յետոյ գնացով խալայի և մանկով Վինստիկ
ես խնայցայ ո. Վարդապետ վերադառնալ և
ուրիշ միտքանքերից որ իմ նամակի պատճառով
Կ. Պոլսոյ պատրիարքը հարցունք էր արել նրանց
Արքայից (նա բացակայ էր իմ ժամանակ) թէ՛ ին-
չու են ծախում փարիզի տունը. նա պատասխա-
նել էր թէ Ռափայէլեան և Մուրադեան վարժա-
րանները միացնելով Վինստիկ քաղաքի մէջ՝ կա-
մենում է նոյն տան փողով կարողանանք գնել
խալայիցում, առ այս պատրիարքը վերադառնալ հարց-
րել էր թէ ապա ուրեմն որքան լուսաւորչական
աշակերտներ պէտք է պահեն նոյն միացեալ վար-
ժարանի մէջ, բայց թէ ինքեանք ինչ պատաս-
խան էին տուել չատցելն ինձ։ Այդ խօսակցու-
թեան ժամանակ միսիթարեանը քաղաքավարի իմ
կերպով ակնարկեցին ինձ իրանց անբաժանու-
թիւնը, որ ես չարժեքեմ այդ գործը, Բայց հարց-
նել նրանց թէ քանի լուսաւորչական մանուկներ
կընդունին կը նշանակէ իւր թիւ նրանց հազին,
մինչդեռ հարկաւոր էր աշխատել որ և ոչ մէկը
ընկնէր նրանց ձեռքը,

Միսիթարեանը, ինչպէս խնայցայ փարիզում, Մուր-
վարժարանի տունը գնահատել էին մէկ Կ. Բ. Ի. Ե. Ե.
Ֆրանկ, բայց հանգուցեալ Սարգիս վարդապետը
ասում էր, որ աւելի պիտի արժենայ ինչպէս
յայտնի է իր քառասունոր պատմութիւնից նոյն
վարժարանի այս հարկաւորեալ նախապետը և աղ-
ղի բրնձնաշնոյն մէկը իր կեանքի գրեթէ երեք
մասը նուիրել էր Մուր վարժարանին, նրա խո-
տակցութեան ամենապիւրի աւարկան այդ վար-
ժարանն էր. նա արժեք էր որ ինչ կեանք է
խնայում Աստուծոյց միայն նրա համար է որ
տեսնէ այդ վարժարանը կենդանացած և հայոց
ազգի ձեռքով։ Նա արժեք էր թէ՛ այդ բանը

վաղուց կը պատահէր, եթէ այս ինչ մարդիկ (ու-
րոյց անուանելը խնայում եմ ինչի) չը խախտէին
այդ. Նրա մահից յետոյ մենք գտանք թղթերի
մէջ 300-ից աւելի նամակներ, գրեթէ բոլորը Մուր
վարժարանին վերաբերեալ. նոյնպէս մի քանի հա-
շիւներ, պարտաւորականներ, և այլն։

Եթէ չեմ սխալուում իմ շարժած հարցի մի կողմ-
նակի հետեանցն էլ, այն էր որ, այդ գործը յանձն-
վեցաւ հոգեւոր իշխանութեան կողմից վատարան
Սենեքերիմ Արքեպիսկոպոսին, որ անցեալները հրապա-
րական դատարանութիւն էր կարգացել Թիֆ-
լիսում նոյն Մուրադեան վարժարանի մասին։

Վահան վարդապետ Բաստամեան

ՆԵՐՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 15-ին տիկին Մենիկովա տունը իր
կոնցերտը թիֆլիսի Սօբորնիկում ճիկնը շատ
լաւ ընդունեցաւ մեր հասարակութիւնից։

Երէկ մայիսի 16-ին թիֆլիսի թատրոնում հայ-
փորձերը ներկայացրին բարեգործական նպատա-
կով «Վէր և նախապաշարունք» կոմիդիա և «Վշ-
նանայն երեկոյ» փողովիւր։ Այդ ներկայացման
մասին կը խօսենք։

Մեզ դուռն են Վ. Ա. ԳՈՒՐԻՍԻՆ, որ այնտեղ ա-
մեն բան կրկնապատիկ գնելով է ծախում։ Այն-
րի պուրը արժէ 1 ռ. 40 կ. իւրը 14 ռ. փայտը
23 կ. չարքար 10 ռուբլի։

Թիֆլիսի մեզ հաղորդում են, որ այնտեղի
պատմական տաճարութեան մօրթիւմ են հի-
ւանդացած կովեր, եղներ և ոչխարներ։ Հասերը
գանգատում են փորացուի և այլ ստամոքսային
հիւանդութիւններէ։ Թղթակիցը զաւտապիտի
ուշագործիւնը դարձում է այդ անկարգութեան
վրա։

ՆՈՒՍԻՆԻՍ ստացանք մի քանի նամակներ, որոն-
ցով հասարակութիւնը հարկաւորութիւն է յայտ-
նում որ. Արքեպիսկոպոսն նրա անվարձ պաշտօնաւոր-
ութեան համար տեղական օրիորդաց դպրոցում։

Կենդանիների հովանաւորութեան թիֆլիսի ըն-
կերութեան անդամները հրաւիրում են. 1. ներկայ
գտնվել ընդհանուր ժողովին, որ լինելու է մայիսի
20-ին, երեկոյան 7 1/2 ժամին զիւրաւորական
ընկերութեան ընտրարանի մէջ, Բարիտախնայից
փողոցի վրա, Ալեքսանդրեան պողոտա և 2. յանձ-
նել իրանցից ստանալի դրամը ընկերութեան գան-
ձապահ Եղոր Մօսէիչ Կասումովին, որ ընտրվում է
վարանցօրկայ Կարէկէճայա փողոցի վրա, Վար-
լամովի տանը № 18. Դրանք կարելի է յանձնել
առաւօտեան 9 ժամից մինչև 10 և երեկոյան 3-ից
մինչև 5։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱՌՈՒՆԵՐԻՆ ԽՆԴԻՐԸ

Անգլիական «Mail» լրագիրը տպել է նորե-
րում մի երկար յօդուած «Պապութիւն Թիւր-
քիայում վերնագրով» որի մէջ մանրամասնա-
բար պատմվում է Թիւրքիայի կաթօլիկ հա-
շիւի շարժումը։ Յօդուածը պատմութիւնից է
սկսում, վերադառնալով XIV դարին, երբ Հը-
ուսիմ հոգեւոր իշխանութիւնը արդէն սկսած
էր իր ինտրիգաները Հայաստանում։ Յօդուածը
մանրամասնաբար, թէև խոշոր պատմական
սխալներ անելով, նկարագրում է հայերի մէջ
կաթօլիկութեան շարժման դարերի ամբողջ
պատմութիւնը մինչև մեր օրերը։ Մենք թող-
նում ենք անցեալը և զիմում ենք ներկային.
այսինքն հասունեանների և հակահասունեան-
ների մէջ պատահած վերջին անցքերին, ինչ-
պէս բացատրում է նրանց անգլիական լրա-
գիրը։

Նրբ նորերում Բիւպէլեան թողեց իր պաշ-
տօնը և ուղևորվեց Հոսմ ապաշխարելու հա-
մար, մեծ վիզիրը երկար ժամանակ անտար-
բեր էր մնում զէպի այն երկարատևութիւնը,

որ ծագել էր կաթօլիկ հայերի կուսակցու-
թիւնների մէջ և պատրաստ էր թող տալ,
որ Բիւպէլեանից յետոյ հայ-կաթօլիկների
համայնքը ինքն ընտրէր իր համար մի նոր
պատրիարք։ Բայց Խէյրէզդին-փաշային պա-
տաւանեցին որ հարկ չը կայ կաթօլիկների
համար մի նոր պատրիարք ընտրելու, որով
հետեւ մոնսիւնիօր Հասունը չէ դադարած de
jure, իրապէս, հայ-կաթօլիկների պատրիարք
լինելուց, թէև աքսորանքի մէջ էր։ Բ. Դու-
սը տարակուսում էր թէ ինչ ճանապարհ
ընտրի, երբ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան
պ. Ֆուրնիէ վճռողապէս յայտնեց, որ թիւր-
քաց կառավարութիւնը պարտաւոր է պաշտ-
պանել պապի կանոնադատին։ Խէյրէզդին-փա-
շան իսկոյն հրամայեց գրել մի բէրաթ ո-
րով Հասունը նշանակվում էր կաթօլիկ հայե-
րի պատրիարք։ Բայց մեծ վիզիրի հակառա-
կորդները աշխատեցին բացատրել սուլթա-
նին, որ այդ տեսակ քայլ կարող է Ռուսաս-
տանի դժգոհութիւնը յարուցանել։ Խէյրէզ-
դին-փաշան յուսահատված էր և դիտաւո-
րութիւն ունէր արդէն իր պաշտօնից հրա-
ժարական տալ։ Ֆուրնիէ վախճալով անչափ
մեծ պատասխանատւութիւնից և չը կամե-
նալով պատճառ դառնալ մինիստրութեան
փոխվելուն, թիւրքաց արտաքին գործերի մի-
նիստը Կարաթէօօրի-փաշայի հետ միասին ա-
ռաջարկեցին մի պայման, այն է, որ Հասունը
ստանալով սուլթանի բերաթ, մի և նոյն ժա-
մանակ հրաժարվի պատրիարքական այն ի-
րաւունքներից, որոնց ձանաչելը դուրս է սուլ-
թանի իրաւունքից։ Հասունը համաձայնվում
է այդ պայմանին, ի հարկէ իր սրտում
վճռած լինելով, որ հէնց որ կը ստանայ
սուլթանի թուղթը, էլ երբէք չի կատարի
իր տուած խոստումը։ Բայց Կարաթէօօրի
փաշան աւելի խորամանկ յայտնվեցաւ, քան
թէ եղբւր Հասունը։ Նա չը բաւականանա-
լով մոնսիւնիօր Հասունից բերանացի խոս-
տումներ, գրել է տալիս այդ խոստումը նոյն
իսկ բէրաթի մէջ էլ... Հասունը յուսահատ-
ված է, նա տեսնում է որ այն, ինչ որ պէտք
է մի գաղտնի և միայն բերանացի պայմանա-
գրութիւն մնար նրա և կառավարութեան
մէջ, այժմ մեծ տառերով գրված է պաշտօ-
նական թղթի մէջ։ Ընդունելով այդ բերաթը
Հասունը պէտք է հրաժարվէր, ուրեմն, այն
մեծ իրաւունքներից, որ տալիս էր նրան
պապի կոնդալը, և նուազեցնում է Հոսմի
ներդրութիւնը կաթօլիկ հայերի հա-
մայնքի վրա։ Այդ կարգիւր նրան կատարել
իր բոլոր դիտաւորութիւնները և պապի նա-
խաճերը։

Այդպիսով արտաքին գործերի մինիստրի
խորամանկութիւնը մի անգամից փոխեց գրու-
թիւնը։ Այժմ Բ. Դուսը առաջարկում է իր
բերաթը Վատիկանի ընտրվածին, բայց Հա-
սունը էլ չէ կամենում ընդունել նրան։

ԱՆԳԼԻԱ

«ГОЛОСЪ» լրագրի առաջնորդող յօդուած-
ներից մէկի մէջ կարդում ենք, որ կոմս Բի-
կոնսթիլը և մարկիզ Սալիսբերիին վերջին
ժամանակներս պատիկի դիւրադրվում և զայ-
րայցում են դարձել։ Ամեն անգամ, երբ հա-
կաւակ կուսակցութեան անդամները լորդերի
ժողովում հարց են առաջարկում ասիական
և արևելեան քաղաքականութեան մասին,
միշտ յիշեալ երկու երեւելի լորդերը սատիկ
անբաւականութեամբ և զրեթէ անվայել բա-
ւերով են պատասխանում իրանց հակառա-
կորդների յարձակմաններին։ Օրինակ նրանց
ասում են, որ Բերլինի վեհաժողովում Անգ-
լիան բնու չը հասաւ այն հետեանքին, որին
նրա լրագորը արդէն հասել էր անցեալ ամառ.
Բերլինից Լոնդոն վերադառնալու ժամանակ,
և որ անգլո-թիւրքական դաշնագիրը, որ այն-
քան ահագին ազնուի բարձրացրեց բոլոր եւ-

րօպայում, մինչև այժմ էլ նա դեռ մնում է
Իբրեւ մի լոկ դաշնագիր, որ իսկապէս գոյու-
թիւն ունի միայն մի քանի պաշտօնական
թղթերի վրա. իսկ երեւելի լորդերը բոլոր
այս հակառակորդներին պատասխանում են
վերաւորելով նրանց անձնաւորութիւնը, և
մեղադրելով, որ նրանք զուրկ են ազգա-
րական զգացմունքից։ Կարծիք չը կայ, որ
այսպիսի դէպքերում, ընդհանուր հարցերը
փոխվում են մասնաւոր, մասնաւորից էլ անց-
նում են անձնականի, և այն ժամանակ, ինչ-
պէս ասում են—le tour est joué...։

Հէնց այսպէս էլ վերջացաւ կառավարու-
թեան արևելեան և ասիական քաղաքակա-
նութեան մասին կայացած ժողովի վիճաբա-
նութիւնը, որը քննվում էր, մայիսի 416-ին
կայացած լորդերի ժողովում, որի հետեանքն
այն եղաւ, որ դուքս Արգայլի փաստերով և
պայցուցցութիւններով ձառին կոմս Բիկոնս-
թիլը և մարկիզ Սալիսբերիի կծու ծաղրա-
բանութիւններով և վիրաւորական խօսքերով
պատասխանեցին։

Հաղորդելով «ГОЛОСЪ» լրագրի այս առաջ-
նորդող յօդուածը մեր ընթերցողներին, մենք
աւելորդ չենք համարում մի և նոյն ժամա-
նակ նկատել, որ «ГОЛОСЪ»-ի այս յօդուածը
բոլորովին անկողմնասէր ողով չէ գրված, ո-
րովհետեւ մենք մի քանի ուրիշ եւրօպական
թերթերում կարգացել ենք, որ ընդհակա-
ռակը կոմս Բիկոնսթիլը և մարկիզ Սալիսբե-
րի շատ բարեխղճաբար և շատ համեստ-
ութեամբ են կատարում իրանց պարտականու-
թիւնները բոլոր ասիական և արևելեան խնն-
դիրների վերաբերութեամբ։ Վերջապէս նոյն
իսկ «ГОЛОСЪ» լրագրի համարներից մէկի մէջ
տպված նոյն Բիկոնսթիլի և Սալիսբերիի
տուած փաստերով և պայցուցցութիւններով
մանրամասն ու պատշաճաբար պատասխանը
կենդանի ապացոյց է մեր ասածներին։

ՄԵՍԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԳԻՍԹԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

10. Ե. Ե. 1527 մայիսի Գնեհրալ Ուոլթէյ
Նատայի և Տրանսլատի քաղաքական և զի-
նուորական գիտաւոր կառավարիչ է նշանակ-
վել։ Լորդ Ջէյմզի Ուոլթէյ զենեքայի ի-
րաւասութեան տակ է գտնվում։

ՄՕՍԿՎԱ, 15 մայիսի Նրէկ Կարմիր Կա-
մարի, (Красная Ворота) և Պետրովսկի
Պարկի մօտ յայտնվեցան երկու բաւական զօ-
րեղ հրդեհներ։

Կ. ՊՈԼԻՍ, 1527 մայիսի Սաօլիպին յայտ-
նեց Բ. Դրան ուսաց պաշտօնատարների շու-
տով փոփոխութեան անհրաժեշտութեան մա-
սին։ Տեղական ուսաց զինուորական իշխա-
նութիւնը հրաման է ատացել շուտով մաք-
րել արևելեան Բուժէլիան։ Ռուսաց աստիճա-
նաւորները գրաւող բանակի հետ միասին
Ռուսաստան կը վերադառնան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի։ Պետական
բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ
97 ռ. 37 կ., երկրորդ 96 ռ. 25 կ., երրորդ
96 ռ. 25 կ., չորրորդ 96 ռ. 25 կ., ներքին
5% առաջին փոխառութեան տոմսը արժէ
243 ռ. 50 կ., երկրորդ 239 ռ., արևելեան
առաջին փոխառութեան տոմսը արժէ 94 ռ.
15 կ., երկրորդ 94 ռ. 75 կ., ոսկի 8 ռ.
56 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա
արժէ 23,12 պէնս. Ռուսաց 100 ռուբլ Գեր-
մանիայի վրա արժէ 197 մարկ 75 պֆ. Փա-
րիզի վրա 244 Ֆրանկ։ Տրամադրութիւնը
ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի։ Պետական
բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ
97 ռ. 37 կ., երկրորդ 96 ռ. 50 կ., երրորդ
96 ռ. 25 կ., չորրորդ 96 ռ. 37 կ., ներքին
5% առաջին փոխառութեան տոմսը արժէ
243 ռ. 25 կ., երկրորդ 238 ռ., արևելեան
առաջին փոխառութեան տոմսը արժէ
24 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ., ոսկի 8 ռ.
60 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ
23, 12 պէնս. Տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

